

ÐÐ ¶°Ô²đøàôÛÆøÆ Ø²đ¼

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Գավառ



Տարածքը	5348 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	240033 հա
այդ թվում՝ վարելահողեր	95148 հա
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	87
Գյուղական բնակավայրեր	93
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	238.5 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	79.7 հազ. մարդ
գյուղական	158.8 հազ. մարդ

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Չբաղեցնում է ՀՀ տարածքի 18%-ը (ամենախոշոր մարզն է ըստ տարածքի): Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի (նախկին՝ Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի բնակչությունը կազմել է հանրապետության ընդհանուր թվաքանակի 7.4%-ը: Բնակչության 66.5%-ը բնակվել է գյուղական բնակավայրերում: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 93 գյուղական բնակավայր:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1260 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1898մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Մարզի տարածքով է անցնում Երևան - Սևան - Գիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Կառուցվել և գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները, ընդարձակ «քարային ծովերը»: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սևանա լճից ազատված տարածքներում հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները:

ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում **Սևանա լիճը**, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Լիճը շրջապատված է պատմական արժեք ներկայացնող բազմաթիվ եկեղեցիներով, որոնցից առավել հայտնիներն են Հայրավանքի եկեղեցին, Մաքենիսի վանքը, Վանկանի և Սևանի թերակղզու վանական համալիրները:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ. հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Գեղարքունիքի մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2003թ մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 3.1%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 14.4%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1.0% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.3%:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքի արտադրությունները: Գեղարքունիքի մարզը հանրապետության բնակչությանը թարմ ձկան հիմնական մատակարարն է: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, սննդի արդյունաբերության ճյուղերը:

2003թ. *մարզում* գործել են 53 արդյունաբերական, 8 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 12 շինարարական, 10 տրանսպորտային, 155 ծառայություններ մատուցող, 428 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 209-ը խանութներ են, 196-ը՝ կրպակներ, 12-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 8-ը՝ սպառողական ապրանքների և 3-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ: Մարզում գործել են նաև 128 հանրակրթական, 16 երաժշտական և արվեստի

դպրոցներ, 8 մարզադպրոց, 47 նախադպրոցական հիմնարկ, 7 պետական, 1 ոչ պետական միջին մասնագիտական և 1 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, 126 գրադարան, 3 թանգարան, 3 հյուրանոց, 8 հիվանդանոց և 18 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

Գավառի տարածաշրջան

Վարելահողեր	15862 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	11
Գյուղական բնակավայրեր	11
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	58.5 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	26.4 հազ. մարդ
գյուղական	32.1 հազ. մարդ

Գավառի տարածաշրջանն ընդգրկում է 643.2կմ² տարածք, բնակչության խտությունը 1 կմ² վրա կազմել է 91 մարդ:

Նախկինում շրջանի տարածքը մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ և կազմել Գեղարքունիք Գավառի մի մասը: Ծարտարապետական հուշարձաններից նշանավոր են Գավառ քաղաքում պահպանված ուրարտական ամրոցը, Գանձակ գյուղի միանավ (IV դար), Հացառատ թաղամասի (IX-X դդ) եկեղեցիները, Հայրավանքը (IX-XII դդ), Իլիկավանքը (X-XI դդ): 1998 թ.-ից հնագիտական պեղումներ են կատարվում Գավառ քաղաքի մոտակայքում գտնվող հինավուրց Ազատ քաղաքի ավերակներում: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Գեղամա լեռներում, ավելի քան 3000 մ բարձրության վրա գտնվող Ժայռապատկերներն ու վիշապաքարերը:

2003թ. տարածաշրջանում գործել են 16 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, 2 շինարարական, 3 տրանսպորտային, 55 ծառայություններ մատուցող, 140 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 53 -ը խանութներ են, 81 -ը՝ կրպակներ, 4 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 25 հանրակրթական և 2 մարզական դպրոց, 17 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական բարձրագույն և 4 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 6 երաժշտական և արվեստի դպրոց, 1 թանգարան, 18 գրադարան, 1 հյուրանոց, 4 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

Մարզկենտրոնը Գավառ (նախկինում՝ Նոր Բայազետ, Կամո) քաղաքն է (2003թ.՝ 26.4 հազ.մարդ), գտնվում է Երևանից 98 կմ հեռավորության վրա: Հիմնադրել են Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից 1830թ. վերաբնակեցված հայերը՝ պատմական Գավառականի տեղում: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Գավառ քաղաքում է թողարկվում մարզի արդյունաբերական արտադրանքի մոտ 0.7%-ը, գյուղատնտեսական արտադրանքի 4%-ը:

2003թ. քաղաքում գործել են 12 արդյունաբերական, 2 շինարարական, 3 տրանսպորտային, 46 ծառայություններ մատուցող, 106 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 6-ը հանրային սննդի օբյեկտներ են, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

2003թ. քաղաքում գործել են նաև 8 հանրակրթական, 8 նախադպրոցական հիմնարկ, 4 պետական միջին մասնագիտական և 1 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն:

Սևանի տարածաշրջան

Վարելահողեր	8999 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	10
Գյուղական բնակավայրեր	10
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	41.2 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	21.4 հազ. մարդ
գյուղական	19.8 հազ. մարդ

Նախկինում տարածաշրջանի տարածքը մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ և կազմել Գեղարքունիք գավառի մի մասը: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են Սևանի վանքը (IXդ.), Լճաշենի դամբարանադաշտը (մ.թ.ա. III-II հազարամյակներ): Քաղաքի շրջակայքում և շրջանի տարածքում կան կիկլոպյան ամրոցներ, դամբարաններ, սեպագիր արձանագրություններ (մ.թ.ա. VIII դ.), եկեղեցիներ (VII-VIII դդ.):

Սևանի տարածաշրջանն ընդգրկում է 392.7կմ² տարածք, բնակչության խտությունը 1 կմ² վրա կազմել է 105 մարդ: 2003թ. տարածաշրջանում գործել են 18 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 3 շինարարական, 3 տրանսպորտային, 47 ծառայություններ մատուցող, 76 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 41-ը խանութներ են, 26-ը՝ կրպակներ, 4-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 4-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 19 հանրակրթական և 2 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 3 երաժշտական և արվեստի դպրոց, 1 ոչ պետական միջին մասնագիտական հաստատություն, 17 գրադարան, 1 հյուրանոց, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Սևան քաղաքը (նախկին՝ Ելենովկա, 22.9 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Հիմնադրել են անցյալ դարում Ռուսաստանից արքայազն ռուս աղանդավորները (մոլոկանները):

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

2003թ. քաղաքում գործել են 15 արդյունաբերական, 3 շինարարական, 3 տրանսպորտային, 43 ծառայություններ մատուցող, 138 մանրածախ առևտրի գործող

օբյեկտներ, որոնցից 4-ը հանրային սննդի օբյեկտներ են, 4-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ:

2003թ. քաղաքում գործել են նաև 7 հանրակրթական դպրոց, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 ոչ պետական միջին մասնագիտական հաստատություն, 2 երաժշտական և արվեստի դպրոց:

Մարտունու տարածաշրջան

Վարելահողեր	21886 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	16
Գյուղական բնակավայրեր	18
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	84.3 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	11.8 հազ. մարդ
գյուղական	72.5 հազ. մարդ

Մարտունու տարածաշրջանն ընդգրկում է 1184.6 կմ² տարածք, բնակչության խտությունը 1 կմ² վրա կազմել է 71 մարդ: Տարածքով և բնակչության թվաքանակով մարզի ամենամեծ տարածաշրջանն է: Նախկինում տարածաշրջանի տարածքը մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ և կազմել Գեղարքունիք գավառի մի մասը: Պատմական և ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են Կոթավանքը (IX դ.), Շողագավանքը (V-IX դդ), Մասրուց անապատը (IX դ), Վանկանը (X դ):

2003թ. տարածաշրջանում գործել են 7 արդյունաբերական, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 27 ծառայություններ մատուցող, 119 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 57-ը խանութներ են, 58-ը՝ կրպակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 30 հանրակրթական դպրոց, 13 նախադպրոցական հիմնարկ, 2 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 մարզադպրոց, 2 երաժշտական և արվեստի դպրոց, 1 թանգարան, 31 գրադարան, 1 հյուրանոց, 7 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 3 հիվանդանոց:

Մարտունի քաղաքը (11.8 հազ.բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղը արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:

2003թ. քաղաքում գործել են 5 արդյունաբերական, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 24 ծառայություններ մատուցող, 41 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը հանրային սննդի օբյեկտ է և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա:

2003թ. քաղաքում գործել են նաև 3 հանրակրթական, 6 նախադպրոցական հիմնարկ, 2 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 մարզադպրոց, 2 երաժշտական և արվեստի դպրոց:

Վարդենիսի տարածաշրջան

Վարելահողեր	37651 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	35
Գյուղական բնակավայրեր	37
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	38.4 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	12.7 հազ. մարդ
գյուղական	25.7 հազ. մարդ

Վարդենիսի տարածաշրջանն ընդգրկում է 1151 կմ² տարածք, բնակչության խտությունը 1 կմ² վրա կազմել է 34 մարդ: Տարածաշրջանում է գտնվում մարզի վարելահողերի ավել քան 35 %-ը, որը էապես նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը:

Նախկինում տարածաշրջանի տարածքը գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ և կազմել Սողք Գավառը: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են կիկլոպյան ամրոցները, Մաքենյաց վանքը (IX-X դդ), Ազատի և Սողքի եկեղեցիները (XIII և XVII դդ):

2003թ. տարածաշրջանում գործել են 7 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, 3 շինարարական, 14 ծառայություններ մատուցող, 28 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 26-ը խանութներ են, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 1-ը՝ սպառողական ապրանքների շուկա: Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 36 հանրակրթական և 2 մարզական դպրոցներ, 8 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական հաստատություն, 3 երաժշտական և արվեստի դպրոց, 38 գրադարան, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Վարդենիս քաղաքի (12.7հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Հատկապես ընդլայնման մեծ հեռանկարներ կան հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

2003թ. քաղաքում գործել են 6 արդյունաբերական, 3 շինարարական, 14 ծառայություններ մատուցող, 26 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 1-ը սպառողական ապրանքների շուկա է: 2003թ. քաղաքում գործել են նաև 4 հանրակրթական, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական հաստատություն, 3 երաժշտական և արվեստի դպրոց, 2 գրադարան, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Ճամբարակի տարածաշրջան

Վարելահողեր	10647 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	15
Գյուղական բնակավայրեր	17
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	16.1 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	7.4 հազ. մարդ
գյուղական	8.7 հազ. մարդ

Ճամբարակի տարածաշրջանը ընդգրկում է 646.3 քառ. կմ տարածք, բնակչության խտությունը 1 քառ. կմ վրա կազմել է 25 մարդ:

Նախկինում տարածաշրջանի տարածքը մտել է Մեծ Հայքի Արցախ և Այրարատ նահանգների մեջ: Պատմական և ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են Ճամբարակի Աստվածածնի եկեղեցին (XIII դ.) և մ.թ.ա. I հազարամյակի կիկլոպյան ամրոցը:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 5 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 12 ծառայություններ մատուցող, 65 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից՝ 32 խանութներ, 31 կրպակներ, 2 հանրային սննդի օբյեկտ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 18 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 2 երաժշտական և արվեստի դպրոց, 5 նախադպրոցական հիմնարկ, 22 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց, 1 թանգարան:

Ճամբարակ քաղաքի (7.4 հազ.բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է: Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90 %-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

2003թ. քաղաքում գործել են 3 արդյունաբերական, 1 շինարարական, 2 տրանսպորտային, 12 ծառայություններ մատուցող, 43 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ:

2003թ. քաղաքում գործել են նաև 4 հանրակրթական և 2 նախադպրոցական հիմնարկ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Գավառ	ք. Գավառ
Ճամբարակ	ք. Ճամբարակ
Մարտունի	ք. Մարտունի
Սևան	ք. Սևան
	գ. Գագարին
Վարդենիս	ք. Վարդենիս

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ազատ	Ազատ
Ախպրաձոր	Ախպրաձոր
Ակունք	Ակունք
Աղբերք	Աղբերք
Այգուտ	Այգուտ
	Ջիվիխլու
Այրք	Այրք
Անտառամեջ	Անտառամեջ
Աստղաձոր	Աստղաձոր
Ավազան	Ավազան
Արեգունի	Արեգունի
Արծվանիստ	Արծվանիստ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արծվաշեն	Արծվաշեն
Արտանիշ	Արտանիշ
Արփունք	Արփունք
Բերդկունք	Բերդկունք
Գանձակ	Գանձակ
Գեղամաբակ	Գեղամաբակ
Գեղամասար	Գեղամասար
Գեղամավան	Գեղամավան
Գեղարքունիք	Գեղարքունիք
Գեղաքար	Գեղաքար
Գեղհովիտ	Գեղհովիտ Յանրդ Լեռնահովիտ
Գետիկ	Գետիկ
Դարանակ	Դարանակ
Դրմաշեն	Դրմաշեն
Դպրաբակ	Դպրաբակ
Դրախտիկ	Դրախտիկ
Երանոս	Երանոս
Չոլաքար	Չոլաքար
Չովաբեր	Չովաբեր
Թագագյուղ	Թագագյուղ
Թթուջուր	Թթուջուր
Լանջաղբյուր	Լանջաղբյուր
Լիճք	Լիճք
Լճաշեն	Լճաշեն
Լճավան	Լճավան
Լճափ	Լճափ
Լուսակունք	Լուսակունք
Խաչաղբյուր	Խաչաղբյուր
Ծակքար	Ծակքար
Ծաղկաշեն	Ծաղկաշեն
Ծաղկունք	Ծաղկունք
Ծափաթաղ	Ծափաթաղ
Ծովագյուղ	Ծովագյուղ
Ծովագարդ	Ծովագարդ
Ծովակ	Ծովակ
Ծովինար	Ծովինար
Կալավան	Կալավան
	Բարեպատ
Կախակն	Կախակն
Կարճաղբյուր	Կարճաղբյուր
Կարմիրգյուղ	Կարմիրգյուղ
Կութ	Կութ
Կուտական	Կուտական Աղյոխուշ
Հայրավանք	Հայրավանք
Չորագյուղ	Չորագյուղ
Չորավանք	Չորավանք
Մաղինա	Մաղինա
Մարտունի	Մարտունի
Մաքենիս	Մաքենիս

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Մեծ Մասրիկ	Մեծ Մասրիկ
Ներքին Գետաշեն	Ներքին Գետաշեն
Ներքին Շորժա	Ներքին Շորժա
Նորաբակ	Նորաբակ
Նորակերտ	Նորակերտ
Նորաշեն	Նորաշեն
Նորատուս	Նորատուս
Շատչրեք	Շատչրեք
Շատվան	Շատվան
Շորժա	Շորժա
Չկալովկա	Չկալովկա
Ջաղացաձոր	Ջաղացաձոր
Ջիլ	Ջիլ
Սարուխան	Սարուխան
Սեմյոնովկա	Սեմյոնովկա
Սոթք	Սոթք
Վահան	Վահան
Վաղաշեն	Վաղաշեն
Վանևան	Վանևան
Վարդաձոր	Վարդաձոր
Վարդենիկ	Վարդենիկ
Վարսեր	Վարսեր
Վերին Գետաշեն	Վերին Գետաշեն
Վերին Շորժա	Վերին Շորժա
Տորֆավան	Տորֆավան
Տրետուք	Տրետուք
Փամբակ	Փամբակ
Փոքր Մասրիկ	Փոքր Մասրիկ



Սևանա թերակղզին

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5103	4897
Ծնվածներ	122	62	60
Մահացածներ	75	38	37
Ամուսնություններ	64	X	X
Ամուսնալուծություններ	3	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	24.5	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	97	49	48
հանրակրթական	1843	940	903
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	94	48	46
միջին մասնագիտական	97	49	48
բարձրագույն մասնագիտական	95	48	47
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	18
Մարզիկներ, մարդ	80	41	39
Զբաղվածներ, մարդ	4176
նրանցից` գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից` գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	179	91	88
բժիշկներ	13
կրտսեր բուժանձնակազմ	48
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	265	135	130
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1633
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	597	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	33933
թատրոն	126
համերգ	-	-	-
թանգարան	143
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	157	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	157
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	19	X	X

